Ը

ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱԿԱՆ ԵՒ ԻԴԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՅԺՄԵԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՒԸ

Ուտիացոց երկրի տղամարդիկը հագնում են Կովկասեան միւս Հայ գիւղացոց պէս. այն է՝ շապիկ, վարտիկ, անդրավարտիկ (գործուած շալէ շալվար), բաճկոն (արխալուղ) մէջքին կապում են կաշիէ կամ արծաթապատ գօտի, գլխին՝ ոչխարի հասարակ մորթուց գլխարկ (փափախ), ոտքերին՝ գուլպայ կամ բրդէ թելից գործած փաթաւայ (փաթաթոց), իսկ վերևից տրեխ (չարուխ) կամ բարձր կրունկով մաշիկներ (քոշեր), որ սովորաբար հագնում են պատուաւոր և հարուստ գիւղացիք։ Զմոռանամ ասել, որ ամեն մի գիւղացու անբաժան ընկերն է նրա սուր դաշոյնը, որ կախում է իւր գօտկուց և կամ չուխայի տակից խրում է գօտկի մէջ՝ արիւնարբու աւազակներից պաշտպանուելու համար։ Որսորդները կրում են իրենց ուսերի վրայ «չախմախլու» ասուած հրացան, որի անպէտք լինելը իրենք գիւղացիք էլ շատ լաւ են հասկանում։ Նոր ձևի հրացանի համար հոգի են տալիս, բայց երբոր յայտնի պատճառով այդպիսի հրացան չեն կարողանում ձեռք գցել, այն ժամանակ, անճարացած, հին ու անպէտք հրացան են գործածում։ Իսկ կանայք հագնում են մի տարօրինակ հագուստ, որ շրջակայ թուրքերի և սարեցի հայա-